

13008

891.99  
U-15

358

1843

## БЕРЕГИТЕ КНИГУ!

ОНА служит не одному, а многим.

Возвращайте книгу в  
срок, чтобы и другие  
могли воспользоваться  
ею.

2003

Հայոց տես Եղիշե Շահման  
Տիգրան Մակար 1897թ. Ապրիլ  
89699 ՅՈՎԵՆԻՍ ՏԵԼԻԽՍԵՐ

J-16

Վ6.

W 5798



No 1197.

## ՊԱՏԱՆԵԿԱՆ ՅՈՒՅԵՐ

1197



Թ Ի Գ Լ Ի Ս

Ճպարան Մ. Շարաձեկի, Նիկոլ. փ. և. 21

1896

2259

ԻՄ ԲԱԶՄԵՐԱԿԱՑ ՀԱՅՐ

ՊԿՐՏԻՉ ՔԱՀԱՆԱՅ

ՄԱԼԻԿԱՍԵՐԻՆ

Дозволено Цензурою. Тифлисъ, 20 Сентября  
1896 года.

ՆՈՒԹՈՒՄ ԵՄ

ԵՐԱԽՏՈՒԹՅՈՒՆ

ԱՆՀՈՒՆ ԶԳԱՑՄՈՒՆՔՈՒ

015792

## ՎԱՍՏԵԼ ԲԵՆԴՈՒԹ

Լուսամուտի մօտ միայնակ նստած  
նայում է ներսից դրսի մրգին,  
Գլուխն ալեղաբդ կրծքին խոնարհած  
Մատնուած է եա պատի մորմորին.  
Հեռու նա մատնուած սիրելիներից,  
Բանդի անկիւնում ձեռ, ոտ, շղթայած,  
Հառաչ է հանդւմ քորքորուած սրտից,  
Իբու մի ուրուք վանդակում փակուած.  
Անցած օրերի կեանքը փառաւոր  
Առնում է նրա հոգում յարութիւն,  
Կարճատե ոսկի վիճակն անցաւոր  
Ծնում է հոգում ապաշաւութիւն:  
—Ո՞հ, ծանրն է շղթաս, լսում է շշուկ,  
Նա կաշկանդել է մարմինս զերուած,



3401  
40

Եւ նրա ներքի իբրև մի մժղուկ  
 Ըսկած եմ անդօր, ուժասպառ եղած.  
 Այս, այն ինչ օր էր, երբ որդիներով  
 Եւ շրջապատուած, իմ տան յարկի տակ  
 Վայելում էի զգուանիք ու գորով  
 Սիրուն ամուսնիցս, հեղ իբրև հրեշտակ.  
 Յուսահատութեան տագնապի ժամին  
 Նրանք էին իմ միակ մըխիթար.  
 Ահա անցեալից միայնակ բաժին  
 Թողել է բեկոր վճիռս արդար:  
 Եւ յուսահատուած նրա աչքերում  
 Ոլոռն արտասուաց շիթեր են փայլում.  
 Եւ նա այլայլուած, իբրև շանթահար  
 Ընկնում է գետնին դեղնած, դալկահար.  
 Քաղցր անուրջների փոխարէն նրան  
 Ահարկու տեսիլը գալիս յանդիման. —  
 Ահա այն սուրբ ուխտ, իւր ձեռովի կոտած,  
 Թշուառ հայրենիք պաշտպանել ուխտած,  
 Կնքած իւր գրօշմով, աղնիւ երդումով,  
 Թշնամեաց հանդէպ ելնել սուսերով.  
 Բայց ո՞հ, սոսկալի ահա նենդութիւնն  
 Առնում է նրա մտրում յարութիւն.  
 Եւ բանդի խորբից կարծես մի խուլ ձայն  
 Գոշում է նրան. — «ազգի դաւաճան»:

Եւ նա — շղթայուած առիւծն ամեհի  
 Կանգնում է կամաց:

Ահա հայ քաջեր,  
 Բարձրաձայն երգով և հոգով արի  
 Դիմում են առաջ. շողում է սուրեր.  
 Ահա և Վարդան. նրա աչքերում  
 Կարծես դիւժական տկոնիք են փայլում.  
 Նրա քայլն արագ. ինքը վառվուն.  
 Հոգի է չնչում հայ կտրիճներուն  
 Նա ինչպէս կայծակ առաջ է շարժւում,  
 Հայոց քաջերի երեսին ժպտում:  
 Տես, նա սլացաւ մըրրկի նման  
 Իւր զօրքի առաջ և տուեց բարի:  
 — Կեցցէ սպարապետ, աշխարհն չայսատան,  
 Գուացին քաջեր:

ծագեց վառ արի:  
 Զօրքերի առաջ ելնելով Վարդան  
 Ահարկու մարտին արձակեց նշան:  
 Ջողացին սրեր. տեղացին նետեր.  
 Միմեանց վրայ հասան երկու քաջ զնդեր.  
 Մարդկանց աղաղակ, զինուց շառաչիւն,  
 Զիերի խրխինց, սրերի շաշիւն,  
 Ոտների տրոփ, ձայն խլացուցիչ,  
 Լուռում աղաղակ, ողբ, հառաչ ու ճիչ...

Հայեր, պարսիկներ իրար են ջարդում.  
 Տէգեր, նիզակներ և վահան փշրտում.  
 Փռում է գետնին քաջերի դիակ,  
 Հոսում է արին ինչպէս յորդ վտակ.  
 Եւ ամեն կողմից հառաչ ու կսկիծ  
 Լսում թաւալգլոր ընկածի բերնից.  
 Կտրիճը՝ ձեռում սուրը բթացած՝  
 Ուզում է տեսնել ոխերիմն ընկած.  
 Քաջերը ծարաւ՝ արին են խնդրում –  
 Վէրը տալստանալ Աւարայր դաշտում.  
 Եւ Հայաստանի սիրով տոշորուած,  
 Մեռնել – մեռցնել հաստատուն ուխտած  
 Անցնում են Տղմուտ գետը անվեհեր,  
 Զգանալ պարսկին կենդան գերիներ:  
 Ալիք Տղմուտի վարդագոյն դառած՝  
 Վկայ են լինում քաջերի փառաց:  
 Տեսնում է. – Հայոց առաջին շարքում  
 Պարդանն է ընկառմ աէդ ցցուած կրծքում.  
 Իսկ նրա շուրջը՝ քաջերը յոզնած  
 Նոր արիութեամբ կուում բորբոքուած:  
 Աւարայր ահեղ, գոռ մարտի դաշտում  
 Դիակներ փուուած, զէնքեր են փայլում...  
 Դիշերուայ լուսին նրանց վառ գլխին

Հիւսեց իւր շողով պսակ երկնային:  
 — Իսկ իմ բաժինը... — վիճակ դժնդակ,  
 Թառն նախատանաց լինել նշաւակ...  
 Ո՞վ. ես դաւաճան... Հեռն ցնորդներ,  
 Հերիք ծերացած ուղեղս այրէք,  
 Վիրաւոր սրտիս բորբոքէք վէրքեր,  
 Թշուառ ծերունուս բանդում շարչարէք:  
 Ա՛հ, անարդ Վասակ, հայրենեաց ոսոխ,  
 Թունալից բաժակ ազգիդ պատրաստող.  
 Հայրենեաց մատնիչ իշխան դաւաճան,  
 Ահա իմ անուան սոսկալի նշան:  
 Եւ նա կարդալով իւր սրտի զզում,  
 Խոնաւ բանդի մէջ յանցանքն է ողբում:  
 Խաւարած աշքերն ահա նա փակած՝  
 Մտապատկերում Հայաստանն աւ'րած.  
 — Թշուառ. հայրենիք, անմեղ գառան պէս  
 Գու աւար դարձար կատղած Յազկերտին,  
 Նիրհած զազանին կանչեցիր հանդէս,  
 Սուր ատամներին դարձնել քեզ բաժին:  
 Ա՛խ, այն ինչ օր էր, երբ Հայ աշխարհիկ  
 էր իրի դրախտ, բերկութեան տեղիք,  
 Իրեն հարազատ որդոց պարզեում  
 Սէր եղայրական, բերկրանք, ցնծութիւն:  
 Բայց այսօր, ով իմ անմեղ հայրենիք,

Ընկած ես իբրև վիրաւոր եղնիկ...  
 Ո՞հ, միթէ չայոց երկրի աւերման  
 Դարձած է պատճառ Վասակ դաւաճան.  
 Միթէ կատաղած գաղանին միակ  
 ես եղայ զրգուիշ—դաւաճան Վասակ...  
 Օ՞հ, թող նեղ շիրիմն ինձ շուտով փակէ,  
 Միակ հանգիստո սառ հողի տակ է:  
 Բայց ծանր է լուծս, ծանր է և շղթաս.  
 Ես պէտք է տանջուիմ հողով հանապազ.  
 Ազգիս բերանից կարկտի նման  
 Պիտ' տեղայ գլխիս ամենայն անկամ. —  
 «Թշուառ չայաստան, քո խեղճ հայրենիք  
 Ո՞վ մատնող Վասակ. անէծքի կնիք  
 է քո բաժինող. ամօթի պսակ  
 Թող պատէ գլուխդ դաւիդ փոխանակ»:

Տեսիլ ողբավի. — ահա հայ կանայք  
 Մաղերը գզգուած... յուսահատ հայացք  
 Դէպ երկնիք ուղղած՝ օգնութիւն ինդրում  
 Իրենց վիճակին:

Սւերած երկրում  
 Փլատակներն այս ու այն կողմն ընկած  
 Կրակի, սրի, արեան ծով դարձած....

Եւ նա ուժասպառ գետնին է ընկնում  
 Դառն հեծեծանքով բանդի անվիճում.  
 Ճնշում է սիրտը, հեծում է հոգին,  
 Խօսում է խիզճը—դատաւոր ներքին:  
 — Ա՞խ, թէ վերստին կարէի տեսնել  
 Թշուառ հայրենեացս անմեղ որդիներ՝  
 Ես նրանց առջև պէտքէ անարգել  
 Ապաշաւէի, լայի իմ մեղքեր.  
 Դառն արտասուզ յորդ վտակ դարձրած  
 Պիտի լուանայի նրա սուրբ վայրեր,  
 Ատելի պարսկի գարշ ձեռով պղծուած...  
 Ա՞խ իմ ընտանիք, թշնւառ զաւակներ,  
 Չեր առջև ինչպէս վատ գերի շորած  
 Սիրտս յօշոտուած ձեղ ցոյց կտայի,  
 Բայց այժմ ձեղանից հեռու մերժըւած  
 Կարօտ եմ մնացել մեղքիս ներուախ.  
 Ներել.. և ինչու... Եւ միթէ արժան  
 Է դաւաճանը... Մատնչի բաժին  
 Է աղէտալի, յաւիտենական  
 Նախատինք, լուտանք, հայհոյանկը գլխին...  
 Թող գարեր անցնին, իմանայ աշխարհ,  
 Գոչն բարձրածայն չայկաղեան որդիք,  
 (Այդ է իմ գործիս վճիռը արդար)  
 Վասակը անարգ՝ մատնեց հայրենիք.

## Ա Ե Ա Ն Ք Է

Հրճուանքը ունայն անցաւոր կեանքի  
թէ մխիթարում իմ տրտում հոգիս,  
Եւ ոչ ցնծութիւնն անմիտ ցնորքի  
հերում է սփոփանք խորտակուած սրտիս:

Ի՞նչ է մեր կեանքը.—վաղանցիկ երազ  
Անցնող բովերով վշտի դառնութեան,  
Եւ մի խաղակիկ դարձած հանապազ  
Վշտի կատակին, սին վայելչութեան:

Եւ ի՞նչ են երգեր, պարեր, խնջոյքներ...  
Լոկ բովէական ոգեորութիւն.  
Կանցնի ժամանակ, և նորից հոգսեր  
Գլխիդ կթափեն վիշտ ու նեղութիւն:

Բայց թէ ներելու ես արժանի չեմ,  
Թող վրաս համնի մահը սոսկալի,  
Դուցէ այն ատեն ես անդորր հանդչեմ.

Եւ նա իւր նեխած մարմնով որդնալի  
Իրմկ խելագար արեց ցնցումներ,  
Ողբաց իւր յանցանը և ծանր վիճակ,  
Դառն հոգեվարքում կարդաց մրմունջներ...

Եւ նա անարդուած, օտար յարկի տակ,  
Մերժուած բոլորից փշեց իւր հոգին  
Անէծքների տակ...  
Անարգ յիշատակ  
Թողնելով յետքից արար աշխարքին...



Եւ ինչու համար անդուլ աշխատանք,  
Քոլոր հոգեկան դառն ըսպէսեր. —  
Կռուել մարդկանց հետ, պապանել մի կեանք —  
Անվերջ գոյութեան այս պատիր պատկեր:

Եւ ի՞նչ է կեանքը. — կռուի ասպարէզ,  
Գործել խղճի գէմ և վիշտ պարանակ.  
Եթէ լուրջ կերպով չորս կռմդդ նայես՝  
Նա է մի անմիտ և դատարկ կատակ...

Կանցնին տարիքդ, բայց երկու մնայուն  
Պատկեր կյիշես մինչև գորեզման. —  
Մէկն է անհոգ, ոսկի մանկութիւն,  
Միւսը՝ տանջանք կռիւ գոյութեան...



### Մ Ա Յ Թ

Թէ մարտի դաշտում դիակդ փռուի,  
Վերջին հառաչդ ենէ քո բերնից,  
Թշնամու սրով մարմինդ խողխողուի,  
Արինդ ծոր-ծոր կաթէ քո կրծքից,

Թէ դու մերկ մարմնով և հացի կարօտ  
Դող-դող ձեռներով խնդրես օգնութիւն,  
Կամ մահիդ ժամին սիրելեացդ մօտ,  
Մահիճում խնդրես մի սիրտ զգայուն,

Թէ վշով ծածկուած նենդաւոր կեանքից  
Դու յուսահատուած մատես տխուր,  
Եւ դառը հոգոց հանես քո կրծքից,  
Ողով սպասես քո մահուան աւուր՝

Ո՞չոք չի խղճայ այնպէս քո վերադ  
իւր ցաւակցական և անկեղծ սրտից,  
Եւ գուրգուրանքով վիշտի անփարատ  
Ո՞չոք չի սփոփի սրտով կարելից.

Ո՞չ մօտիկ լնկերդ, ոչ բարեկամներ,  
Ո՞չ ազգականներ, ոչ քոյր, ոչ եղբայր,  
Ո՞չ իսկ ամուսինդ, ոչ հայրդ անձնանուէր,  
Ո՞չոք չի գթայ ինչպէս որ քո մայր:

Նա կծորացնէ յոդնած աչքերից  
Ոլոռն արտասուրք քեզ վրայ լալով,  
Նա քեզ կսփոփէ մաշող վշտերից  
Մայրական սրտի բոլոր գորովով:

Նա հոգուդ համար անվերջ կաղօթէ  
Մեղմ հաւաշանքով, ուր էլ որ լինի,  
Վերջին լումայով նա մոմ կվառէ  
Տիրամօր առջև, որ բարեխօսիւ:

Եղբայրը եղբօր շուտ կմոռանայ,  
Տոփոտ սիրականը՝ իւր սիրելուն,  
Նրանց մտքերից շուտ կանհնտանայ  
Վիշտ ու արտասուրք և հէզ քո անուն:

Եւ օրեր կանցնին, կխնդան մարդիկ,  
Յաւէտ կմատնեն քեզ մոռացովեան,  
Բայց միայն մայրդ ազօթքով մեղմիկ  
Լացով կյիշէ մինչեւ գերեզման...

Նա, որպէս գիշերն օրօրոցիդ քով  
Նստում էր յաճախ ժպիտն աշքերին,  
Ճիրմիդ մօտ նոյնպէս անվերջ ազօթքով  
Կընստի յաճախ արցոնքն աշքերին...

342



ՀԱՅ ԱԽՍՈՒՑԻՉ

Թէ դժոյն գէմքով, հին շորեր հազած,  
Հորացած ձեռքում թղթերի ծրաբ,  
Գնում է գլուխն կրծքին խոնարհուծ՝  
Գիտցիր, որ ալբատ ուսուցիչն է այն:

Թէ նիհար մարմնով, թախիծ ճակատին,  
Հանգարտ քայլերով զրօննում մենակ,  
Մտածում անվերջ վիշտը անմեկին՝  
Գիտցիր, որ տկար ուսուցիչն է այն:

Թէ տանջուած սրտով, կեանքից հեռացած,  
Անծանօթ մարդկանց ունայն հրճուանքին,  
Երեսին մահու կնիր գրօշմուած՝  
Գիտցիր, մոռացուած ուսուցիչն է այն:

Թէ չուող թռչնի կեանքին նմանած,  
Չունի սեպհական ոչ տուն և ոչ վայր,  
Այլ բաղդի որդի, անտէր մնացած՝  
—Թափառաշրջիկ ուսուցիչն է այն:

Թէ իբրև տերև առջևը հողմի  
Խալալիք դարձած հոգաբարձութեան,  
Իզուր զոհ դարձած կուրացած կրքի  
Գիտցիր, որ անզօր ուսուցիչն է այն:  
Թէ հիւանդ մարմնով անկողնում պառկած,  
Անդադար հազում, արին է թքում,  
Եւ ողորմութեան կարօտ մնացած՝  
Գիտցիր, որ մեռնող ուսուցիչն է այն:



## ԷՆԿԵՐ ՍԻՐԵԼԻ

(Եռէք Ս. Մ. -ին)

Քո սիրաը ազնիւ և ամբիծ հոգին,  
Ո՞հ, քանի նուազ ինձ առաջնորդ եղան,  
Որպէս արշալոյս իմ խաւար կեանքին  
Բացին առաւօտ գեղեցիկ գարնան:

Ես քեզ սիրելով յաւէտ ուխտեցի  
Ցիշտակդ իմ մէջ անմոռաց պահել.  
Քո ընտրած ազնիւ շաւիդդ ընտրեցի –  
Մայր եկեղեցի, հայրենիք սիրել:

Եւ եթէ մէկ օր սառ գերեզմանում  
Հեռացած լինեմ աշխարհից ունայն,  
Դու մի զլանա յիշել քո սրտում  
Մտատանց եղորդ սէրը անսահման:



## ՊԱՂԵՍՑԻՆԻ ՌԱՏԻԿ

(Հերմոնավովեց)

Ասա ոստիկ Պաղեստինի,  
Թէ մոր բսել ես ծաղկել,  
Ո՞ր բլուրի, կամ մը հովտի  
Դու զարդարանքն ես եղել:  
Յորդանանի ջրերի քով  
Արեկ շնդքն է փարել,  
Թէ Լիբանի քամին կրօվ  
Քեզ գիշերանց տատանել:  
Մեղմիկ աղօթք էին ասում,  
Թէ հնչեցնում հին երգեր,  
Երբ տերմներդ էին հիւսում  
Մաղէմի խեղճ որդիներ:  
Եւ սղջ է դեռ արմաւենին,  
Եւ տապ օրին գրաւմւմ  
Անապատում անցաւորին  
Լայն սաղարթովն հովասուն:

Թէ անշատմամբ անմիշիթար  
 Թոռմեց նա քեզ նմանակ,  
 Եւ տերինները դալկահար  
 Ծածկում է արդ հողն անյագ։  
 Պատմիր, թէ որ երկիւղածի  
 Չեռով եկար այս աշխարհ։  
 Տրտմնւմ էր նա, և արցունիքի  
 Յիշնւմ ես հետքն ու աշխարհ։  
 Թէ պարզերես, արի զինուոր  
 Էր Աստղծու նա գնդին,  
 Քեզ պէս, երկնից արժանաւոր  
 Տէր—ի մարդկանց առաջին։  
 Դու առարկայ ջերմ խնամքի,  
 Սուրբ պատկերի յանդիման։  
 Կեցած ես, ոստդ Սաղէմի  
 Հաւատարիմ պահապան։  
 Պայծառ շաւաղը, շողը կանթեղի,  
 Տապանակ, խաչ—սուրբ նշան...  
 Հաշտութեամբ լի և բերկրալի  
 Ե քո բոլորն ու վերան։



(Ն ո ը մ՛ռ ն ա ռ ո վ է ի ց)

Երբ ալեկոծւում է արտը դեղնած,  
 Եւ անտառը թաւ՝ բամուց շնկում,  
 Պարտիզում թարչում սալորը հասած  
 Զովարար, կանաչ տերեի շուարնւմ։

Երբ անուշահոտ ցօղով սրսկուած  
 Վառ երեկոյին, կամ առաւօտոն  
 Գեղեցիկ ժամին, թփում ծածկուած  
 Արծաթէ շուշանն ինձ իւր մօտ կանչում։

Երբ սառը վտակ խաղում է ձորում,  
 Եւ խորասուզուած խառն անուրջի մէջ  
 Դիւցազնական տաղ է ինձ մրմնջում  
 Այն երկրից ուսկից հոսում է անվերջ՝

Ցայնժամ հանգարտում է հոգուս յուզում,  
 Ցրում են ճակտիս կնճիռներ դիզուած,  
 Եւ երջանկութիւն գտնում եմ երկրում,  
 Եւ երկնիքի մէջ տեմնում եմ Աստուած...



(Նուէր Մ. Յ.-ին)

Կեանքի դառնութեան տանջանքի ժամին  
Արի, իմ ընկեր, սփոփեմ ես քեզ,  
Քանի յուսահատ տանջուող քո՞ հոգին  
2է բեկուած մաշող ժախծից դառնապէս:

Ես արտասուրիս շիթերով ցողեմ,  
Քո ճնշուած սրտին տամ մի թարմութին,  
Եւ քեզ տանջող կուռ զլթան կործանեմ,  
Նորից պատճառեմ և սէր և աւին:

Եւ թող քեղանից վիշտը հեռանայ,  
Մտացիր նոր կեանք, ցնծա խնդագին.  
Յոյսդ խորտակուած թող կենդան մնայ,  
Մատնուածն անմիտ կեանքի տանջանքին:

## Վ Տ Ա Կ

Վաղիր հա վաղիր, իմ սիրուն վտակ,  
Քո անուշ զրին ըլլիմ ես զուրբան,  
Վաղիր, սրսկիր ցօղովդ յստակ  
Հայրենի երկրի արտ ու անդաստան:  
Վաղիր, զովացրու քրտնած գեղջուկին,  
Եւ առատ ջուր տուր եզներին յոգնած,  
Վաղիր ողողել սիրուն հատուկին—  
Խեղճուկի յոյսին՝ հողումը ժմաղուած:  
Վաղիր, նազանի, ծառերի միջով,  
Եւ ջուր տուր նրանց ծաղկիլ—զօրանալ  
Վաղիր արևառ հեծուորի մօտով,  
Տնւր կոհակներովդ գէմքը լուանալ:  
Վաղիր, հա վաղիր, իմ սիրուն վտակ,  
Քո անուշ զրին ըլլիմ ես զուրբան,  
Վաղիր, սրսկիր ցօղովդ յստակ  
Պարտէղ ու այզի, անդ ու անդաստան:



\* \* \*

(Նմանութիւն Նաղսոնին)

Ասում են մեռաւ. ես չեմ հաւատում,  
Կենդանի է նա աշխարհիս վրայ.  
Որպէս մի հատիկ թաղուած սև հազում  
Նա պիտի աճէ, պիտի գօրանայ:

Որպէս բեկրեկուած լարերը քնարի  
Մէկ օր պիտ հնչեն տխուր, լալագին,  
Անպէս և կայծը նրա խօսքերի  
Պիտի բորբոքեն, վառեն շատերին....

ՃԱՅՐԵ

## ԹԱՂՈՒՄԸ ԴԵՂՋԻ

(Փոխաղբութիւն Նաղսոնից)

Լսում ես արգեօր, գիւղի մէջ հեռուն  
Ցրում է դանդաղ զօղանջը դանդի.  
Զայնը համերգի հասնում գաշտերուն,  
Ուր փայլում է դեռ շողը արեգի:  
Տեսնում ես արգեօր, գագաղը մէկի  
Ուսերին դրած տանում են մարդիկ.  
Սառ դիակն է այդ վաստակաւորի,  
Սրգար քրտինքով պահող ընտանիք:  
Ամառուայ արել նրան այրեց,  
Ցուրտ քամին ծեծկեց ճակատը արդար,  
Կարկուտը զաշտում հացը փճացրեց,  
Հեղեղն հասցրեց կորուստ անհամար:  
Անթիւ զրկանքներ տարաւ քաջօրէն  
Իւր մանկութիւնից մինչև ի վախճան.  
Թող այսուհետև կոյր բազդի ձեռքէն  
Նա հանգչի անդորր քնով հանգստեան:

ՀԱՅՐԵ

ՂՈՐԻՆ-ՂՈՐԻՆ

(Օրօրոցի երգ)

Ղորին—ղորին, իմ դոխիկ,  
ծիծս ուտես ճռպոցով,  
Անուշ քնես խոկոցով.

Ղորին—ղորին, իմ ձագիկ,  
Ուտես, խմես, մեծանաս,  
Խաղալու գառը դառնաս:

Ղորին—ղորին, տատրակիկ,  
Ոտի ենես դու ման դաս,  
Լեզու ենես բարե տաս.

Ղորին—ղորին, իմ գառնիկ,  
Դառնաս աշխոյժ աշակերտ,  
Գիրը սիրես հոգուդ հետ:

Ղորին—ղորին, իմ որդեակ,  
Դառնաս աղնիւ պատանի,  
Հայրենիքիդ պիտանի:

Ղորին—ղորին, իմ Հայկակ,  
Կասկես կշտիդ փայլուն սուր,  
Դուշմանի դէմ ահաւոր:

Ղորին—ղորին, իմ հերոս,  
Ենես նրանց դու առաջ,  
Զարդես, փշես որպէս քաջ.

Ղորին—ղորին, նոր Կիւրոս,  
Թող Հայաստան քեզ յիշէ,  
Սէրդ սրտում վառ պահէ:



\* \* \*

Պարզասիրտ եղբայր, մի հրապուրուիր  
 Կեանքի ծիծաղկոտ վառքից խարուսիկ,  
 Մանկական սիրով դու ձեռ մի մեկնիր  
 Սրտով օձ մարդկանց, իսկ տեսրով գառնիկ:

Դու դեռ ի՞նչ գիտես, քանիսը դրանց  
 Կտրել են կեանքի թելը ընկերոջ  
 Քանիսը անարդ, ոսովս հայրենեաց  
 Մատնել են իրենց եղբօրն ու ըրոջ:

Եւ կարծում ես դու վեհ խօսրիդ նրանք  
 Մեծ զին կգնեն, կամ կհաւանեն.  
 Օ՛հ, եղբայր անփորձ, որպիսի պատրանք  
 Եւ ունայն ցնորդ քեզ կփայփայեն:

Օ՛հ, թէ դու բեկուած սրտով ետ դառնաս,  
 Արի իմ հոգեակ, իմ գիրկը արի,  
 Գուցէ երկրոսէ այնտեղ թելժենաս  
 Յուսահատեցնող ծաղրից ամբոխի:



### ՄԱՀ ՀԱՅՐԱՎԵՑԻ

(Ապրիլ 16, 1891 թ.)

Հայ աղջը նորից ընդհանուր սուդի,  
 Գլուխ խոնարհած ջախջախուած սրտի՝  
 Ասում է «մեռաւ... օրհասը մէկին  
 Խիստ ճակատագրով՝ յանձնեց ոև հոգին»:  
 Կանցնին տարիներ. վիճակը մարդկան  
 Որպէս մի անիւ միշտ կպտտուի,  
 Բայց մեզնից միայն կենդան կմնան  
 Գործերը բարի աղնիւ կրքերի:  
 Սին աշխարհից ետ նեղլիկ զերեզմանն  
 Է մեր բոլորի կայանը վիրջին.  
 Եւ մեր կարճ կեանքն է ողջ անցողական  
 Իբրև բուլաներ վաղորդայն մէդին:



Նա, սիրտը որի մինչև գերեզման  
Բարախում էր թունդ աղջի գորովով,  
Գործերը որի առաքելական  
Տուին պտուղներ արդար վաստակով,  
  
Որն անձնանուէր հովիւ էր հօտին,  
Եւ տառապեալին պաշտպան դժառատ,  
Կայծը ոգեշունչ Աւետարանին  
Արծարծեց, վառեց մէկի փոխանակ՝  
  
Երբէք չի դադրիլ արդար շրթունքից  
Հնչուելու նրա պայապատ անունն,  
Եւ իբրև կոթող շատերի սրտից  
Հեն ջնջուելու վեհ գործքն անհուն։  
  
Գլուխն ալեզարդ վաստակաւորի  
Թնդ ծանր հոգսից հանգչի ցուրտ շիրմում,  
Որ պաշտպան աղջին դիմաց օտարի  
Մնաց իւր խաչին միշտ հաւատարիմ։  
  
Եւ թող անմոռաց սրտից թոթովանը  
Կարդայ մշտական շրթունքը հայի,  
Եւ ամեն գարնան ոլորեն պսակ  
Վարդն ու արցունքը այն համեստ շիրմին։—



## ԵՐԿՈՒ ԲՆԱԿԱՐԱՆ

(Նուէր Պ. Հ.-ին)

Անցնում եմ մենակ ես երեկոյեան  
Հանդարտ քայլերով. տեսնում եմ կողքիս  
Երկու դէմաղէմ տարբեր բնակարան.  
Մէկը հոյակապ, վառաւոր տեսրով,  
Ժառերով պատած, երեր յարկանի,  
Լայն—լայն դռներով, պատուհաններով,  
Փայլում է փառքի տեսքով դեղանի.  
Անթիւ զարդարանք, քնքոյշ ծաղիկներ,  
Գորգեր, հայելիր, պատառ թանիագին. —  
Պերճ աշխարհային մի շընադ պատկեր  
Ներկայանում է մարդու առաջին։  
Ողջ օրը այնտեղ հնչում է անվերջ  
Մարդկային անհոգ երգեր ու ծիծագ,  
Եւ դաշնամուրի անուշ ելեէջ  
Եւ անհոգ սրտի քրքիջներ ուրախ։

Այնտեղ գեղանի կոյսը սիրասուն՝  
Հոլանի կրծքով դաշնամուրի մօտ,  
Ճկուն մատներով ստեղունքներուն  
Զարնում է անհոգ մինչև առաւօտ:  
Այնտեղ վիշտն օտար:

Իսկ դրա հանդէպ նեղ բնակարան  
Անշուր պատերով. մի զամբար աղօտ,  
Ճին վարագոյրով ծածկուած պատուհան,  
Լոյսը չէ հանգչում մինչև առաւօտ:  
Կենում է այստեղ երգիշը աղքատ  
Զրկուած բոլորից: Նրա աչքերից  
Հեռու է քունը. և նա անփարատ  
Երգում է տաւզի տխուր լարերից  
Վիշտը աշխարհի, սէրը մոռացուած,  
Եւ սրբութիւնը և խիզը մարդկան,  
Եւ կորած յոյսն ու հաւատն առ Աստուած,  
Եւ կապանքները անմիտ բռնութեան:  
Ողջ օրը այստեղ արցունը է թափում,  
Երգեր են հիւտում աշխարհիս համար.  
Տխուր քնարից ձայներ են հնչում,  
Եւ աղօթք ամբիծ առ Աստուած արդար:  
Այստեղ փառքն օտար:

## Է Ն Կ Ե Ր Ո Զ

(Ծուէր Ս. ա. Սահակեանին)

Տնւր ինձ քո ձեռդ, ընկեր թանկագին,  
Սեղմեմ յուսարեկ ալեկոծ սրտիս,  
Եւ նրա սիրոյ ուժով կաթողին  
Հնչեցնեմ լարերը տխուր քնարիս:

Եւ սառ մատներով զարնեմ թելերին  
Նորից արձակել աւետիք սիրոյ,  
Եւ նորից մարդկանց լրեալ սրտերին  
Արծարծեմ ձայնը խեղգլւած յուսոյ:

Եւ առհաւատչեայ դրա փոխարէն  
Գոշեմ բորբոքուած ձայնը հառաչի.  
Տնւր ինձ սփոփիլ մաշող ախտերէն,  
Որ յոյսը իմ մէջ նորից կանաչի:

Եւ ես ամոքուած ծանրաբեռ վշտից  
Բարձր հնչեցնեմ եօթնազի քնար՝  
Ճմլրւած սրտիս վիրաւոր խորքից  
Մարտած ձայն սիլոյ, թող լսէ աշխարհ։

Եւ գուցէ ձեռդ քո ընկերական  
Լինի ըսփոփիչ իմ տանջուած հազուա.  
Եւ աղնիւ խօսքդ քո եղբայրական  
Եռանդ տայ հնչել հանգած լաբերուս։



### ՄԱՆԿՈՒԹԵԱՆ ՕՐԵՐ

Յիշում եմ ես ձեզ իմ սուրբ մանկութեան  
Դուք ծաղկափթիթ և անմեղ օրեր,  
Քանի տակաւին աշխարհս ունայն  
Զէ բացել առջևս ինձ կեանք մահարեր։

Ով էր երազում, թէ զով առաւօտն  
Տեղի պիտի տար հեղձիչ կէսօրին,  
Եւ մռայլ ամպեր, կայծակ ու որսոն,  
Հըքացնէին տեսքը արեին։

Ինչպէս որ ծաղիկն՝ զով առաւօտեան  
Ճաղից յետ կորցրեց իւր տեսքը սիրուն.  
Այնպէս և կեանքն իմ աշխարհումո ունայն՝  
Վարակուեց... կորցրեց քաղցր մանկութիւն...



Ա Ե Ւ Մ Տ Տ Ե Ւ Մ Ո Ւ Ն Ք

«Գնա՛ մեռի՛ր, արի՛ սիրեմաւ:  
Ճող. առած.

Լսում եմ երբ մահը մէկին  
Թախիծ գալիս է վրաս,  
Ճերմ արտասուզ, վիշտ անմեկին  
Կարեկցութիւն անպակաս:

Հեգ յիշատակն հանգուցեալի  
Մնում է ինձ անմոռաց.  
Եւ մի կորուստ անդառնալի  
Ընկերութիւն անձնուրաց:

Ատում եմ ես ամբողջ աշխարհ,  
Ով կենդանի նրաննում,  
Բայց մի կսկիծ անմըխիթար  
Մեռնողըն ինձ է թողնում:

Սիրում եմ ես յիշել նրա  
Մև շիրիմը սև հողում,  
Յաւակցական խղճով ահա  
Նրան յարգող եմ դառնում:

Մեռնողի հետ յուղուած հողիս  
Թռչել սիրում է հեռու...  
Բայց ողջերին այս աշխարհիս  
Հոնիմ ես սէր սիրելու...



§ Խ Ա Ի Ւ — Տ Ր Տ Ո Ւ Մ

Տիսուր, տրամամ... Մէկը չկայ,  
Որ կարենաս ձեռ մեխել  
Տիսուր ժամիդ, որ ցանկանայ  
Վիշտդ տանջող փարատել.

Կեանքդ կանցնի. և զուր իղձեր  
Քեզ կխաբեն հանապադ.  
Բայց սրտիդ մօտ անձնանըւէր  
Քեզ ընկերներ են պակաս.

Սիրել... Եւ մւմ... Միթէ կարաս  
Բոլոր սրտով զու սիրել,  
Սրտիդ յուզմունք, սրտիդ գաղտնիք  
Ընկեղծօրէն աւանդել:

Ճուրջիկ ես նայում ունայնութիւն...  
Ողջ անզգայ, անտարքեր...  
Աշխարհային լոկ ցանկութիւն.  
Անարդ ոսկու զերիներ...

Եւ զու դարձեալ տիսուր—տրամ,  
Յովնած զլուխդ կրծքիդ՝  
Մտատանջող վիշտդ ես երգում  
Մատնըւած դառն արցունքիդ...



ԲԱՆԱՍԵՂԺԻՆ

Գ. Ք. ՀՆ.

Որպէս մի աստղ մեր կեանքի մէջ  
Հսկսեցիր պածառ փայլել,  
Զարթեցնել սէր մեր որտի մէջ՝  
Լեզուդ շարար, ով բանաստեղծ:  
  
Չօնեցիր քեզ ազնիւ տաւիդ,  
Եւ հիւսեցիր քնքոյշ թելեր,  
Ընտրեցիր քեզ փշոտ շաւիդ,  
Քնարդ անգին, ով բանաստեղծ:  
  
Արձակեցիր հաւատոյ ձայն,  
Որպէս զեղանջը կոչնակի,  
Տարածելու շուրջդ համայն,  
Չայնդ անուշ, ով բանաստեղծ:  
  
Թողիր կեանքի ամեն բերկրանք,  
Ընտրեցիր քեզ աղքատութիւն,  
Լալով երգել վշտալի կեանք,  
Տողդ մարգրիտ, ով բանաստեղծ:

ԱԿՋԵ

\* \* \*

ԴԵԿՈՆՄԲԵՐ 31, 12 Ճ. ԳԻՉԵՐՈՒԱՅ

Փամը հնչեցրեց. և մի ցուրտ սարսուռ  
Անցաւ չորացած մարմնիս վրայով.  
Ո՞հ, ինչպէս կորաւ, և ուր վնաց ուր  
Կեանիքիս մէկ տարին անզգայ կեբալով:

Մարդկանց աչքալոյս տուող նորտարին  
Ո՞հ, ինչպէս պէտք է ինձ դիմաւորէ.  
Մի անտանելի վիշտ անհնարին,  
Թէ բաղդի բաժակ պիտի պարզեմ...

ԱԿՋԵ

Ս Ի Ր Ա Յ Ա Ս Տ Վ Ի Ւ Կ

Աստղել սիրուն, հոգուս արի,  
Փայլիր պայծառ երկինից վրան,  
Երուած սրտիս սիրոյս բարե  
Քո վառ շողով հասցրու նրան:

Եմ դու էիր, երբ առաջին  
Տեսար հալած մեր շրթումիներ,  
Երբ սէրը մեր շողիդ տակին  
Երար բացին սրտերը մեր:

Քո լոյսիդ տակ, թփերի մէջ  
Երջանկութիւն մենք զգացինք.  
Կարօտալի սիրով անվերջ  
Սրտի զեղմունիք մենք թափեցինք:

Ն Ի Ա Ն . . .

Դու ծաղկեցար ինչպէս մի վարդ եղեմում,  
Մանուկ սրտիդ կեանքը սէր էր պարզեռում,  
Եւ ճակատիդ արշալոյսի շողն ոսկի  
Կամարում էր պայծառ պսակ գեղանի.  
Սրտով անմեղ, որպէս տատրակ աշխարհում,  
Գուրգուրանքներ, վառ ժայռներ վայելում.  
Եւ չորս կողմից բարեկամներ, ընկերներ  
Հնչեցին քեզ հեշտագին խօսք սիրանուէր.  
Եւ դու նրանց շոյող խօսքից դրաւուած՝  
Մանուկ սրտից կեանք երգեցիր սրտաբաց:  
  
Դու մեծացար, հասակդ առար նազելի,  
Կեանքը բաժակն իւր մօտեցրեց թունալի...  
Հասկանալով շար սրտերի նենդութիւն,  
Վարդով ծածկուած սփոռոցի տակ մահուան թոյն.  
Սին աշխարհի ունայնութեան դու առաջ  
Քնքոյց սրտիցդ արձնկեցիր թոյլ հառաշ...

Անձնանձն

Եւ դու էիր միակ վկան,  
Երբ արցունքով ողջոյն վերջին  
Միմեանց տուինը մենք յաւիտեան.  
Դու ես վկայ մեր սև օրին...

Եւ այժմ էլ դու, աստղիկ սիրուն,  
Եղիր լնկեր մեր սև դարդին,  
Ճագիր նոր յոյս մեր սրտերում –  
Կրելու մեր վիշտն անմեկին:

Եւ երբ մէկ օր երկու թմբեր  
Տեսնես անհոգ դրուած ի հող՝  
Դու մեզ կարդա մեղմ մելոտներ  
Արձակելով քո պայծառ շող:

Աստղիկ սիրուն, հոգուս արհ,  
Փայլիր պայծառ երկնից վրան,  
Երուած սրտիս սիրոյս բարե  
Քո վառ շողով հասցրու նրան:



Յ Ա Ն Կ

Էջ

Վասակը բանդում . . . . .	5
Կեանքը . . . . .	13
Մայր . . . . .	15
Հայ ուսուցիչ . . . . .	18
Ընկեր սիրելի . . . . .	20
Պաղեստինի սստիկ . . . . .	21
Երբ ալեկոծւում է արտը դեղնած . . . . .	23
Կեանքի գառնութեան տանջանքի ժամին	24
Վտակ . . . . .	25
Ասում են մեռաւ. ես չեմ հաւատում . . . . .	26
Թաղումը գեղջկի . . . . .	27
Ղուն—զուն.	28
Պարզասիրա եղբայր . . . . .	30
Մահ հայրապետի . . . . .	31
Երկու բնակարան . . . . .	33
Ընկերոջ . . . . .	35
Մանկութեան օրեր . . . . .	37
Սև մտածմունք . . . . .	38
Տխուր—տրտում . . . . .	40
Բանաստեղծին . . . . .	42
Ժամը հնչեցրեց. և մի ցուրտ սարսուռ . .	43
Դու ծաղկեցար ինչպէս մի վարդ եգեմում .	44
Սիրոյ աստղիկ . . . . .	45

2013

13008

